# Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

## *Կազմված «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքից*

*Հարց 1*

Պետական կազմակերպությունը՝

շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտային կազմակերպություն է, որն ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, շրջակա միջավայրի պահպանության և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 2*

Պետական կազմակերպությունը որպես սեփականություն՝

ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 3*

Պետական կազմակերպությունը կարող է՝

իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 4*

Պետական կազմակերպության գտնվելու վայրը՝

նրա մշտական գործող մարմնի գտնվելու վայրն է.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված, 4-րդ մաս/

*Հարց 5*

Պետական կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ՝

միայն հիմնադրի որոշմամբ.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված, 5-րդ մաս/

*Հարց 6*

Պետական կազմակերպությունը կարող է ունենալ ՝

Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվանմամբ կլոր կնիք, իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված, 6-րդ մաս/

*Հարց 7*

Պետական կազմակերպության սեփականությունը ձևավորվում է՝

կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև պետական կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 8*

Պետական կազմակերպության հիմնադրման ժամանակ հիմնադրի կողմից որպես սեփականություն հանձնվող գույքի չափը սահմանվում է՝

պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնադրման մասին որոշմամբ.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 9*

Հիմնադրման ժամանակ պետական ոչ առևտրային կազմակերպությանը հիմնադիրը չի կարող որպես սեփականություն հանձնել՝

նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկից ավելի արժողությամբ գույք, եթե օրենքով կամ հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 10*

Պետական կազմակերպությունն իրավունք ունի՝

օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 11*

Պետական կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է՝

պետական ոչ առևտրային կազմակերպությունը.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված, 4-րդ մաս/

*Հարց 12*

Հիմնադիրը կարող է պետական կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել՝

ցանկացած գույք.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 13*

Պետական կազմակերպությունն իրավունք չունի՝

ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված, 3-րդ մաս/

*Հարց 14*

Պետական կազմակերպությունն իրավունք ունի՝

իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված, 3-րդ մաս/

*Հարց 15*

Վարձակալության չհանձնված ամրացված գույքի օգտագործման արդյունքում պետական կազմակերպության ստացված եկամուտները՝

պետական կազմակերպության սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ կազմակերպության կանոնադրությամբ .

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված, 3-րդ մաս/

*Հարց 16*

Պետական կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները՝

հիմնադրի սեփականությունն են.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված, 3-րդ մաս/

*Հարց 17*

Պետական կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել՝

միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 18*

Պետական կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է՝

կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 19*

Պետական կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչություններն ստեղծվում են՝

հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված,

1-ին մաս/

*Հարց 20*

Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն օրենքով սահմանված կարգով ստեղծելու իրավունք ունի`

համայնքը.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված, 5-րդ մաս/

*Հարց 21*

Համայնքային ոչ առևտրային կազմակերպության ստեղծման մասին որոշումը և կազմակերպության կանոնադրությունը հաստատում է`

համայնքի ավագանին.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված, 5-րդ մաս/

*Հարց 22*

Պետական կազմակերպությունն ստեղծվում է.

առանց ժամկետային սահմանափակման, եթե նրա կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված, 3-րդ մաս/

*Հարց 23*

Պետական կազմակերպության կանոնադրությունը կամ դրա փոփոխությունները հաստատում է`

հիմնադիրը, իսկ հիմնադրի որոշմամբ նախատեսված դեպքում` նրա լիազորած պետական մարմինը.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված, 3-րդ մաս/

*Հարց 24*

Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են`

հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 25*

Հիմնադրի որոշմամբ կամ պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև՝

կոլեգիալ կառավարման, խորհրդակցական, վերահսկողություն իրականացնող և (կամ) այլ մարմինների ձևավորում.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 26*

Պետական կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 27*

Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի հաստատումը՝

հիմնադրի բացառիկ լիազորություններն են.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 28*

Պետական կազմակերպության հիմնադրի որոշմամբ լիազորված պետական մարմնի լիազորությունները՝ որպես պատվիրակված լիազորություն, կարող են փոխանցվել՝

համայնքի ղեկավարին կամ այլ մարմնի.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 29*

Պետական կազմակերպության լիազորված պետական մարմինը՝

պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 30*

Պետական կազմակերպության գործունեության վերահսկողությունն իրականացնում է՝

լիազորված պետական մարմինը.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 31*

Պետական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է՝

գործադիր մարմինը, որին նշանակում և ազատում է լիազորված պետական մարմինը, եթե հիմնադրի որոշմամբ կամ պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 32*

Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում՝

իր մեղքով պետական ոչ առևտրային կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառած վնասի համար.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված, 4-րդ մաս/

*Հարց 33*

Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնող անձը կամ կոլեգիալ մարմնի ղեկավարը պարտավոր է՝

օրենքով սահմանված կարգով լուծել նաև նրա կողմից պետական ոչ առևտրային կազմակերպությանը կամ պետությանը պատճառած վնասի փոխհատուցման հարցը.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված, 4-րդ մաս/

*Հարց 34*

Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է՝

չկատարել հիմնադրի, լիազորված պետական մարմնի, պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինների՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված, 5-րդ մաս/

*Հարց 35*

Պետական կազմակերպության գործադիր մարմինը՝

օրենքով և պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 36*

Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի ձևավորման և գործունեության կարգը, նրա լիազորությունները սահմանվում են՝

պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 37*

Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի անդամ կարող են լինել՝

միայն ֆիզիկական անձինք.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 38*

Պետական կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձն իրավունք ունի կոլեգիալ կառավարման մարմնի նիստերին մասնակցել՝

խորհրդակցական ձայնի իրավունքով.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 39*

Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի անդամների քանակական կազմը սահմանվում է.

պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ, բայց չի կարող 3 հոգուց պակաս լինել.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված, 3-րդ մաս/

*Հարց 40*

Հիմնադրի որոշմամբ պետական կազմակերպության  կոլեգիալ կառավարման մարմնին կարող են վերապահվել՝

պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի նշանակումը, նրա հետ կնքվող աշխատանքային պայմանագրի հաստատումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, գործադիր մարմնի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը, եթե հիմնադրի որոշմամբ կամ պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ այդ լիազորությունը վերապահվել է իրեն.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված/

*Հարց 41*

Հիմնադրի կողմից սահմանված կարգով պետական կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունների սահմանումը կարող է վերապահվել՝

պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնին.

Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»ՀՀ օրենքի 19-րդ հոդված, կետ՝ դ/

*Հարց 42*

Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի որոշումներն ընդունվում են՝

նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված, 3-րդ մաս/

*Հարց 43*

«Պետական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն  խոշոր են այն գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքները՝

որոնք կապված են պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվանը նախորդող եռամսյակում տրված հաշվապահական հաշվետվությամբ պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հիսուն տոկոսից ավելին.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 44*

Խոշոր գործարքը կատարվում է՝

լիազորված պետական մարմնի համաձայնությամբ.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 45*

Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի ձևավորման դեպքում պետական կազմակերպության կողմից սեփականության իրավունքով նրան պատկանող գույքի արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված խոշոր գործարքներ կատարելու մասին որոշման ընդունումը պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ կարող է վերապահվել՝

պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնին.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված, 3-րդ մաս/

*Հարց 46*

Պետական կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել՝

իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդված, 2-րդ մաս/

*Հարց 47*

Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել՝

100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի, ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպության.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդված, 1-ին մաս/

*Հարց 48*

Պետական կազմակերպության լուծարման դեպքում պետական կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո դրամական միջոցները փոխանցվում են՝

պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդված, 4-րդ մաս/

*Հարց 49*

Համայնքին փոխանցված պետական կազմակերպությունը վերակազմակերպվում է՝

համայնքային ոչ առևտրային կազմակերպության.

/«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 25.1-րդ հոդված, 2-րդ մաս/